

Հաստատված է
ՀՀ բնապահպանության և ընդերքի
տեսչական մարմնի կառավարման խորհրդի
2025 թվականի նոյեմբերի 28-ի № 08-Լ որոշմամբ

ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԳՆԱՅԱՏՈՒՄ

ԲՆԱՊԱՀՊԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ
2025 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ



ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ

ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) կատարողականի գնահատումը կատարվել է հիմք ընդունելով 2014 թվականի դեկտեմբերի 17-ի «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի պահանջները և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունիսի 25-ի «Տեսչական մարմինների գործունեության կատարողականի գնահատման սկզբունքները, չափորոշիչները և կարգը հաստատելու մասին» N 693-Ն որոշման հիման վրա: Կատարողականի գնահատման մեթոդոլոգիան հաստատվել է ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի 2021 թվականի ապրիլի 21-ի N12-L որոշմամբ:

Տեսչական մարմնի կատարողականի գնահատման չափորոշիչներն են՝

1. նպատակի չափորոշիչներ.
2. գործընթացի չափորոշիչներ.
3. արդյունքի չափորոշիչներ:

1. ՆՊԱՏԱԿԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

1. Կատարողականի գնահատման նպատակի չափորոշիչները վերաբերում են բնապահպանության և ընդերքի ոլորտներում անվտանգության և օրենսդրության պահանջների պահպանման ապահովման վերլուծությանը:

1.1) Տեսչական մարմնի գործունեության հիմնական նպատակին հասնելու մակարդակը գնահատելու համար անհրաժեշտ է յուրաքանչյուր ոլորտի համար վերլուծել հաշվետու ժամանակահատվածում Տեսչական մարմնի կողմից իրականացված ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների ընդհանուր կշռի միջին ցուցանիշը:

Այն արտահայտվում է հետևյալ բանաձևով՝

$$L = S_1/S$$

Որտեղ՝

L-ը հաշվարկվող ցուցանիշն է.

S₁-ը հաշվետու ժամանակահատվածում իրականացված ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների կշիռների հանրագումարն է.



S-ը հաշվետու ժամանակահատվածում Տեսչական մարմնի կողմից
իրականացված ստուգումների քանակն է:



Ըստ Տեսչական մարմնի վերահսկողական ոլորտների՝ L ցուցանիշի և ստուգումների քանակի համեմատականը ներկայացված է Աղյուսակ 1-ում.

Աղյուսակ 1

Ցուցանիշներ	Վերահսկողական՝ ոլորտ բնապահպանություն			Վերահսկողական ոլորտ՝ ընդերք		
	2025թ. 2-րդ եռ.	2024թ. 2-րդ եռ.	Համեմատ.	2025թ. 2-րդ եռ.	2024թ.2-րդ եռ.	Համեմատ.
իրականացված ստուգումների քանակ՝ S	52	44	8	15	15	0
իրականացված ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների կշիռների հանրագումար՝ S ₁	288.78	263.64	25.14	351.72	189.7	162.02
Ցուցանիշը՝ L	5.55	5.99	-0.44	23.45	12.65	10.80

2025 թվականի 2-րդ եռամսյակում Բնապահպանության և ընդերքի Տեսչական մարմնի կողմից իրականացվել են առանձնահատուկ ստուգումներ՝ առանց համապատասխան ոլորտի և գործունեության տեսակի համար նախատեսված ստուգաթերթերի, որպիսի հանգամանքներում հայտնաբերված խախտումների դեպքում հնարավոր չէ հաշվարկել կշիռ և ստանալ հաշվետու ժամանակահատվածում իրականացված ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների կշիռների հանրագումարը (S₁): Ուստի վերոնշյալ ստուգումների վերաբերյալ տեղեկատվությունը՝ ըստ վերահսկողության ոլորտի, ներկայացվում է Աղյուսակ 1.1-ում.

Աղյուսակ 1.1

Առանց ստուգաթերթ իրականացված ստուգումների քանակ, այդ թվում՝ խախտումների հայտնաբերմամբ և առանց խախտումների									
Վերահսկողական ոլորտ	2025թ. 2-րդ եռամսյակ			2024թ. 2-րդ եռամսյակ			Տարբերություն		
	քանակ	խախտումների հայտնաբերմամբ	առանց խախտումների	քանակ	խախտումների հայտնաբերմամբ	առանց խախտումների	քանակի	խախտումներ ի	առանց խախտումների
բնապահպանություն	37	33	4	42	17	25	-5	16	-21
ընդերք	2	2	0	0	0	0	2	2	0
Ընդամենը	39	35	4	42	17	25	-3	18	-21





Ըստ ստուգվող սուբյեկտների գործունեության ոլորտի՝ L ցուցանիշի և ստուգումների քանակի համեմատականը ներկայացված է Աղյուսակ 2-ում.

Աղյուսակ 2

Գործունեության ոլորտ	2025թ. 2-րդ եռամսյակ ստուգումների քանակ՝ S	2025թ. 2-րդ եռամսյակ՝ ցուցանիշ S1	2025թ. 2-րդ եռամսյակ՝ հաշվարկվող ցուցանիշ L	2024թ. 2-րդ եռամսյակ ստուգումների քանակ՝ S	2024թ. 2-րդ եռամսյակ՝ ցուցանիշ S1	2024թ. 2-րդ եռամսյակ՝ հաշվարկվող ցուցանիշ L	2025թ. և 2024թ. 2-րդ եռամսյակների L ցուցանիշի համեմատություն	2025թ. և 2024թ. 2-րդ եռամսյակների ստուգումների քանակի համեմատություն
01 Բուսաբուծություն ու անասնաբուծություն, որսորդություն և հարակից ծառայություններ	1	15.00	15	1	1.60	1.6	13.4	0
02 Անտառային տնտեսություն և փայտամթերումներ 84	2	2.00	1	1	6.25	6.25	-5.25	1
03 Ձկնորսություն և ձկնաբուծություն	5	12.1	2.42	8	16.60	2.08	0.35	-3
08 Հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման այլ ճյուղեր	10	284.22	28.42	8	97.70	12.21	16.21	2
09 Հանքագործական արդյունաբերության հարակից գործունեություն	5	67.50	13.5	7	92.00	13.14	0.36	-2
10 Մանրամթերքի արտադրություն	1	6.00	6	3	15.60	5.20	0.80	-2
11 Խմիչքների արտադրություն	1	3.00	3	4	54.60	13.65	-10.65	-3
16 Փայտանյութի մշակում, փայտից, խցանակեղևից, ծղոտից և հյուսկեն նյութերից արտադրատեսակների արտադրություն, բացի կահույքից	1	1.00	1				1.00	1
22 Ռետինե և պլաստմասսայե արտադրատեսակների արտադրություն	3	12.00	4	1	9.00	9.00	-5.00	2



Գործունեության ոլորտ	2025թ. 2-րդ եռամսյակ ստուգումների քանակ՝ S	2025թ. 2-րդ եռամսյակ՝ ցուցանիշ S1	2025թ. 2-րդ եռամսյակ՝ հաշվարկվող ցուցանիշ L	2024թ. 2-րդ եռամսյակ ստուգումների քանակ՝ S	2024թ. 2-րդ եռամսյակ՝ ցուցանիշ S1	2024թ. 2-րդ եռամսյակ՝ հաշվարկվող ցուցանիշ L	2025թ. և 2024թ. 2-րդ եռամսյակների L ցուցանիշի համեմատություն	2025թ. և 2024թ. 2-րդ եռամսյակների ստուգումների քանակի համեմատություն
23 Այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն	7	25.20	3.6	6	14.60	2.43	1.17	1
24 Հիմնային մետաղների արտադրություն	1	15.00	15				15.00	1
25 Պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրություն, բացի մեքենաներից և սարքավորանքից	1	5.00	5				5.00	1
28 Մեքենաների և սարքավորանքի արտադրություն՝ չներառված ուրիշ խմբավորումներում	2	22.5	11.25				11.25	2
33 Մեքենաների և սարքավորումների նորոգում				1	10.00	10.00	-10.00	-1
35 Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում				3	10.20	3.40	-3.40	-3
35.11.2 Էլեկտրաէներգիայի արտադրություն հիդրոէլեկտրակայաններում 85	11	46.25	4.20	3	9.20	3.07	1.14	8
36 Ջրի հավաքում, մշակում և բաշխում	1	25.86	25.86				25.86	1
38 Թափոնների հավաքում, մշակում և ոչնչացում, նյութերի վերականգնում	7	81.87	11.70	5	58.59	11.72	-0.02	2
41 Ծեփերի շինարարություն				2	12.00	6.00	-6.00	-2
42 Քաղաքացիական շինարարություն				4	18.50	4.63	-4.63	-4
56 Հանրային սննդի կազմակերպում	2	10.00	5.00				5.00	2



Գործունեության ոլորտ	2025թ. 2-րդ եռամսյակ ստուգումների քանակ՝ S	2025թ. 2-րդ եռամսյակ՝ ցուցանիշ S1	2025թ. 2-րդ եռամսյակ՝ հաշվարկվող ցուցանիշ L	2024թ. 2-րդ եռամսյակ ստուգումների քանակ՝ S	2024թ. 2-րդ եռամսյակ՝ ցուցանիշ S1	2024թ. 2-րդ եռամսյակ՝ հաշվարկվող ցուցանիշ L	2025թ. և 2024թ. 2-րդ եռամսյակների L ցուցանիշի համեմատություն	2025թ. և 2024թ. 2-րդ եռամսյակների ստուգումների քանակի համեմատություն
84 Պետության կառավարում և պաշտպանություն. պարտադիր սոցիալական ապահովագրություն				2	26.90	13.45	-13.45	-2
96 Այլ անհատական ծառայությունների մատուցում	1	0.00	0.00				0.00	1
G46.38.1 Ձկան և ձկնամթերքի մեծածախ առևտուր	1	0.00	0.00				0.00	1
G46.73.9 Այլ շինանյութի մեծածախ առևտուր	1	0.00	0.00				0.00	1
G47.19.0 Այլ մանրածախ առևտուր ոչ մասնագիտացված խանութներում	1	6.00	6.00				6.00	1
P85.60.9 Կրթության բնագավառում այլ օժանդակ գործունեություն	1	0.00	0.00				0.00	1
G46.71.2 Բենզինի մեծածախ առևտուր	1	0.00	0.00				0.00	1
Ընդամենը	67			59				8

Այն դեպքում, երբ ստուգումն իրականացվել է ստուգաթերթի ոչ ամբողջական հարցերի շրջանակներում՝ ապա կշիռը հաշվարկվել է ստուգման ընթացքում խախտումներ արձանագրելու համար հիմք հանդիսացած հարցերի պատասխաններից ստացված կշիռների գումարի արժեքը բաժանելով ստուգման հարցերի շրջանակում այդ հարցերի պատասխանների կշիռների գումարի առավելագույն հնարավոր արժեքին և բազմապատկած ստուգաթերթերի առավելագույն կշռի միավորով՝ 50:

2025 թվականի 2-րդ եռամսյակում Բնապահպանության և ընդերքի Տեսչական մարմնի կողմից իրականացվել են առանձնահատուկ ստուգումներ՝ առանց համապատասխան ոլորտի և գործունեության տեսակի համար նախատեսված ստուգաթերթերի, որպիսի հանգամանքներում հայտնաբերված խախտումների դեպքում հնարավոր չէ հաշվարկել կշիռ և ստանալ հաշվետու ժամանակահատվածում իրականացված ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների կշիռների հանրագումարը (S_1): Ուստի, այդ ստուգումների վերաբերյալ տեղեկատվությունն ըստ տնտեսվարող սուբյեկտի ծավալած գործունեության ոլորտի՝ ներկայացվում է Աղյուսակ 2.1-ում:



Աղյուսակ 2.1

Առանց ստուգաթերթ իրականացված ստուգումների քանակ, այդ թվում՝ խախտումների հայտնաբերմամբ և առանց խախտումների									
Գործունեության ոլորտ	2025թ. 2-րդ եռամսյակ			2024թ. 2-րդ եռամսյակ			Տարբերություն՝		
	քանակ	խախտումների հայտնաբերմամբ	առանց խախտումների	քանակ	խախտումների հայտնաբերմամբ	առանց խախտումների	քանակի	խախտումների	առանց խախտումների
01 Բուսաբուծություն ու անասնաբուծություն, որսորդություն և հարակից ծառայություններ	2	1	1	2	1	1	0	0	0
02 Անտառային տնտեսություն և փայտամթերումներ 84	2	2	0	0	0	0	2	2	0
03 Ձկնորսություն և ձկնաբուծություն	1	1	0	13	10	3	-12	-9	-3
07 Մետաղական հանքաքարի արդյունահանում 97	2	2	0	0	0	0	2	2	0
10 Մանրամթերքի արտադրություն	3	2	1	0	0	0	3	2	1
11 Խմիչքների արտադրություն	0	0	0	2	0	2	-2	0	-2
23 Այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն	3	3	0	1	1	0	2	2	0
33 Մեքենաների և սարքավորումների նորոգում	1	1	0	0	0	0	1	1	0
35.11.2 Էլեկտրաէներգիայի արտադրություն հիդրոէլեկտրակայաններում 85	1	1	0	1	0	1	0	1	-1
35.11.3 Էլեկտրաէներգիայի արտադրություն միջուկային էլեկտրակայաններում 87	0	0	0	1	0	1	-1	0	-1
38 Թափոնների հավաքում, մշակում և ոչնչացում, նյութերի վերականգնում	1	1	0	0	0	0	1	1	0



39 Թափոնների վնասագերծում և այլ մշակում	1	1	0	0	0	0	1	1	0
41 Շենքերի շինարարություն	2	1	1	0	0	0	2	1	1
42 Քաղաքացիական շինարարություն	1	1	0	0	0	0	1	1	0
55 Կացության կազմակերպում	0	0	0	2	0	2	-2	0	-2
56 Հանրային սննդի կազմակերպում	8	8	0	11	1	10	-3	7	-10
84 Պետության կառավարում և պաշտպանություն. պարտադիր սոցիալական ապահովագրություն	0	0	0	1	0	1	-1	0	-1
86 Առողջապահություն	0	0	0	1	0	1	-1	0	-1
93 Սպորտի, զվարճությունների և հանգստի կազմակերպման բնագավառում գործունեություն	0	0	0	1	1	0	-1	-1	0
G47.30.2 Ավտոմեքենաների համար հեղուկ գազի, սեղմված բնական գազի և գազոլիների մանրածախ առևտուր գազալցման կայաններում	5	5	0	3	3	0	2	2	0
M72.19.1 Գիտական հետազոտություններ և փորձարարական մշակումներ բնական գիտությունների բնագավառում	1	1	0	0	0	0	1	1	0
P85.10.0 Նախադպրոցական կրթություն	0	0	0	1	0	1	-1	0	-1
P85.31.1 Հիմնական կրթություն	0	0	0	1	0	1	-1	0	-1
P85.31.2 Միջնակարգ (լրիվ) կրթություն	2	2	0	0	0	0	2	2	0





1.2) Ոլորտի առավել ռիսկային բնագավառներում փոփոխությունների առկայությունը գնահատելու համար անհրաժեշտ է վերլուծել հաշվետու ժամանակահատվածում Տեսչական մարմնի կողմից ոլորտի առավել ռիսկային բնագավառներում իրականացված ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների ընդհանուր կշիռների միջին ցուցանիշը:

Այն արտահայտվում է հետևյալ բանաձևով՝

$$C = S_R / S$$

Որտեղ՝

C-ն ոլորտի առավել ռիսկային բնագավառներում փոփոխությունների առկայությունն է.

S_R –ը հաշվետու ժամանակահատվածում ոլորտի առավել ռիսկային բնագավառներում իրականացված ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների կշիռների հանրագումարն է.

S–ը հաշվետու ժամանակահատվածում Տեսչական մարմնի կողմից ոլորտի առավել ռիսկային բնագավառներում իրականացված ստուգումների քանակն է:

Առավել ռիսկային բնագավառներ են համարվում «Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կողմից իրականացվող՝ ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը հաստատելու» և «Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1511-Ն և 2012 թվականի նոյեմբերի 22-ի N1562-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 22-ի N1125-Ն որոշման 16-րդ կետի 3-րդ աղյուսակում ընդգրկված 84 և ավելի միավոր ունեցող գործունեության տեսակները:

Տեսչական մարմնի կողմից իրականացված ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների ընդհանուր կշիռների միջին ցուցանիշի հիման վրա ոլորտի առավել ռիսկային բնագավառներում փոփոխությունների առկայությունը ներկայացված է Աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3

Գործունեության ոլորտ	2025 2-րդ եռամսյակ S	2025թ. 2-րդ եռամսյակ S_R	2025թ. 2-րդ եռամսյակ C	2024թ. 2-րդ եռամսյակ S	2024թ. 2-րդ եռամսյակ S_R	2024թ. 2-րդ եռամսյակ C	Համեմատություն 2025թ. և 2024թ. 2-րդ եռամսյակների ստուգումների քանակի
02 Անտառային տնտեսություն և փայտամթերումներ 84	2	2.00	1	1	6.25	6.25	1
35.11.2 Էլեկտրաէներգիայի արտադրություն հիդրոէլեկտրակայաններում 85	11	46.25	4.20	3	9.20	3.07	8



2025 թվականի 2-րդ եռամսյակում Բնապահպանության և ընդերքի Տեսչական մարմնի կողմից իրականացվել են առանձնահատուկ ստուգումներ՝ առանց համապատասխան ոլորտի և գործունեության տեսակի համար նախատեսված ստուգաթերթերի, որպիսի հանգամանքներում հայտնաբերված խախտումների դեպքում հնարավոր չէ հաշվարկել կշիռ: Ուստի առավել ռիսկային բնագավառներում փոփոխությունների առկայությունը առանձնահատուկ ստուգումների մասով հաստատված մեթոդաբանության չափորոշիչների համաձայն հնարավոր չէ հաշվարկել:

Վերոնշյալ առանձնահատուկ ստուգումների վերաբերյալ տեղեկատվությունը՝ ըստ գործունեության ոլորտի, ներկայացվում է Աղյուսակ 3.1-ում:

Աղյուսակ 3.1

2025 թվականի 2-րդ եռամսյակում առանց ստուգաթերթ իրականացված ստուգումներ									
Գործունեության ոլորտ	2025թ. 2-րդ եռամսյակ			2024թ. 2-րդ եռամսյակ			Տարբերություն		
	քանակ	խախտումների հայտնաբերմամբ	առանց խախտումների	քանակ	խախտումների հայտնաբերմամբ	առանց խախտումների	քանակի	խախտումներ ի	առանց խախտումների
02 Անտառային տնտեսություն և փայտամթերումներ 84	2	2	0	0	0	0	2	2	0
07 Մետաղական հանքաքարի արդյունահանում 97	2	2	0	0	0	0	2	2	0
35.11.2 Էլեկտրաէներգիայի արտադրություն հիդրոէլեկտրակայաններում 85	1	1	0	1	0	1	0	1	-1
35.11.3 Էլեկտրաէներգիայի արտադրություն միջուկային էլեկտրակայաններում 87	0	0	0	1	0	1	-1	0	-1
Ընդամենը	5	5	0	2	0	2	3	5	-2





1.3) Ռիսկերի պլանավորման, վերլուծության և գնահատման համար հատկացված ֆինանսական միջոցները և մարդկային ռեսուրսները.

Չափորոշի գնահատումը կատարվում է տարին մեկ անգամ:

1.4) Խորհրդատվության, մեթոդական աջակցության և կանխարգելման միջոցների համար հատկացված ֆինանսական միջոցները և մարդկային ռեսուրսները

Չափորոշիչը գնահատվում է ելնելով խորհրդատվության, մեթոդական աջակցության և կանխարգելման միջոցների համար Տեսչական մարմնի կողմից մարդկային ռեսուրսների ու ֆինանսական միջոցների հատկացումից, ինչպես նաև փաստացի իրականացված խորհրդատվական, մեթոդական աջակցության և իրազեկման միջոցառումների քանակից և դրանցում մասնակիցների ընդգրկվածությունից:

2025 թվականի հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

- Տեսչական մարմնի ղեկավարի տեղակալները մեկական իրազեկում-հանդիպում են ունեցել Վայոց ձորի մարզի երեք և Տավուշի մարզի երկու համայնքերում: Հանդիպումների ընթացքում քննարկվել են ճանապարհաշինարարական աշխատանքների, սորուն կյանքի տեղափոխման ընթացքում փոշու արտանետումների նվազեցման, հողագործության հանույթի օգտագործման և տեղափոխման, ջրօգտագործման թուլությունների ձեռքբերման, ապօրինի որսի և ձկնորսության դեպքերի կանխարգելման, հողերի նշանակության և նպատակային օգտագործման, կենցաղային աղբի, խոզանների, աղբավայրերի, եղեգների, չորացած տերևների, գյուղատնտեսական հանդակներում բուսածածկույթի այրման, ապօրինի ծառահատումների, աղբավայրերի շահագործման, սեզոնային հրդեհների չեզոքացման, թափոնաջրերով գետերի աղտոտման վերաբերյալ հարցեր:
- Տեսչական մարմնի ղեկավարի երեք տեղակալները իրազեկում-հանդիպում են ունեցել Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնքում տեղի բնակիչների հետ, և քննարկել են խոզաբուծարանի հարևանությամբ ապրող անձանց մտահոգող հարցերը:
- Արարատի տարածքային բաժնի պետը իրազեկում-հանդիպում է ունեցել ՆԳՆ Արարատի մարզային ոստիկանության, փրկարար ծառայության, Արարատ, Վեդի, Վերին Դվին համայնքապետերի, բնակավայրերի ղեկավարների և տեղի բնակիչների հետ: Հանդիպման ընթացքում ներկայացվել է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 85.2 հոդվածը՝ «խոզանները, բուսական մնացորդներով ու չորացած բուսականությամբ տարածքները, արոտավայրերի ու խոտհարքների բուսականությունը գյուղատնտեսական, անտառային ու բնության հատուկ պահպանվող տարածքների հողերում բուսածածկն այրելը»: Քաղաքացիներին մտահոգող վերհանված հարցերի քննարկման շրջանակներում առաջարկվել են իրատեսական կարգավորումներ:
- Տեսչական մարմնի Արմավիրի տարածքային բաժնի պետը երեք իրազեկում-հանդիպում է ունեցել ՆԳՆ Արմավիրի մարզային ոստիկանության, փրկարար ծառայության, Արաքսի, Արմավիրի և Վաղարշապատի համայնքապետերի, ոլորտային պատասխանատուների, բնակավայրերի ղեկավարների և բնապահպանական հարցերով ակտիվ քաղաքացիների հետ: Հանդիպումներին ներկայացվել են մթնոլորտային օդի ու

հողերի պահպանությունը, ջրային ռեսուրսների, ընդերքի օգտագործումը և պահպանումը, բնապահպանական պետական փորձաքննությունը՝ մանրամասնելով ըստ նշված ուղղությունների նախատեսվող համատեղ աշխատանքները: Համակողմանի քննարկվել են մարզում առկա բնակիչներին հուզող բնապահպանական հարցեր, ներկայացվել լուծումներին միտված առաջարկներ:

- Տեսչական մարմնում հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել է փայտածուխի արտադրամասերի գործունեության հետևանքով մթնոլորտային օդի վրա վնասակար ազդեցության վերաբերյալ քննարկում Շրջակա միջավայրի նախարարության, Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի, ՆԳՆ փրկարար ծառայության ներկայացուցիչների հետ: Քննարկման առանցքում է եղել անտառամերձ, բնակավայրերի և մայրուղիների հարակից տարածքներում փայտածուխի արտադրամասերում գործունեության կազմակերպման ընթացքում մթնոլորտ արտանետումներն ու առաջացող խնդիրները: Տեսչական մարմնի կողմից առաջարկվել է օրենսդրական փոփոխությունների նախագծի մշակման համար առաջիկայում ներկայացնել կոնկրետ լուծումներ, ներառելով՝ բարելավված գործիքակազմ, թիրախային և հստակ մոտեցումներ:

Խորհրդատվության, մեթոդական աջակցության և կանխարգելման միջոցների համար հատկացվել է 300 000 ՀՀ դրամ, որը հանդիսանում է գործուղման ծախս:

2024 թվականի հաշվետու ժամանակահատվածում Շիրակի և Արագածոտնի մարզերում 30 տնտեսավարող սուբյեկտների հետ կազմակերպվել է մեկական իրազեկում-հանդիպում, որի ընթացքում Տեսչական մարմնի տարածքային բաժինների 11 աշխատակիցների կողմից ներկայացվել են «Վարչական իրավախախտումների վերաբերյալ», «Ջրային», «Ընդերքի մասին» ՀՀ օրենսգրքերում, Բնապահպանական վերահսկողության մասին, «Մթնոլորտային օդի պահպանության մասին», «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքներում և ենթաօրենսդրական ակտերում կատարված փոփոխություններն ու լրացումները:

Խորհրդատվության, մեթոդական աջակցության և կանխարգելման միջոցների համար ֆինանսական միջոցներ չեն հատկացվել:

1.5) Հայաստանի Հանրապետության կառավարությանը կամ համապատասխան ոլորտների քաղաքականություն մշակող պետական մարմիններին ներկայացված առաջարկների քանակը:

Չափորոշչի գնահատումը կատարվում է կիսամյակը մեկ անգամ:

2025 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում վերահսկողական ոլորտի օրենսդրության փոփոխության վերաբերյալ ՀՀ կառավարությանը և/կամ համապատասխան ոլորտների քաղաքականություն մշակող պետական մարմիններին ներկայացվել է թվով 26 առաջարկություն:

2024 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում վերահսկողական ոլորտի օրենսդրության փոփոխության վերաբերյալ ՀՀ կառավարությանը և/կամ համապատասխան ոլորտների



2. ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

Գործընթացի չափորոշիչները վերաբերում են Տեսչական մարմնի գործառույթների իրականացման ընթացքին:

2.1) Ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների միջին տևողությունը

Չափորոշիչը գնահատելու համար անհրաժեշտ է հաշվարկել հաշվետու ժամանակահատվածում տարեկան ծրագրով չալանավորված, սակայն ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընթացքում բուն ստուգման գործընթացի միջին տևողությունը:

Հաշվարկը կատարվում է հետևյալ բանաձևով՝

$$R = T/N$$

որտեղ՝

R-ը հաշվարկվող ցուցանիշն է.

T –ն ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընթացքում ստուգման գործընթացի ընդհանուր տևողությունն է.

N–ը ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների քանակն է:

Արդյունքները ներկայացվում է Աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4

Ցուցանիշներ	2025թ. 2-րդ եռամսյակ	2024թ. 2-րդ եռամսյակ	Համեմատ.
Ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընթացքում ստուգման գործընթացի ընդհանուր տևողություն՝ T (օր)	455	392	63
Ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների քանակ՝ N (հատ)	56	55	1
Ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընթացքում բուն ստուգման գործընթացի միջին տևողություն՝ R (օր)	8.13	7.13	1.00

2.2) Բարձր ռիսկային տնտեսավարող սուբյեկտներում և ստուգման օբյեկտներում ստուգումների քանակը՝ ստուգումների ընդհանուր քանակի համեմատությամբ:

Չափորոշիչի գնահատման համար անհրաժեշտ է հաշվարկել բարձր ռիսկային տնտեսավարող սուբյեկտներում և ստուգման օբյեկտներում հաշվետու ժամանակահատվածում կատարված ստուգումների քանակի հարաբերությունը Տեսչական մարմնի ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված և նույն ժամանակահատվածում իրականացված ստուգումների ընդհանուր քանակին:

Հաշվարկը կատարվում է հետևյալ բանաձևով՝



$$R = N_2/N_1$$

որտեղ՝

R -ը հաշվարկվող ցուցանիշն է.

N_2 -ը բարձր ռիսկային տնտեսավարող սուբյեկտներում և ստուգման օբյեկտներում ստուգումների քանակն է.

N_1 -ը ստուգումների տարեկան ծրագրով հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված և իրականացված ստուգումների ընդհանուր քանակն է:

Արդյունքները ներկայացվում է աղյուսակ 5-ում:

Աղյուսակ 5

Ցուցանիշներ	2025թ. 2-րդ եռամսյակ	2024թ. 2-րդ եռամսյակ	Չամեմատ.
Բարձր ռիսկային տնտեսավարող սուբյեկտներում իրականացված ստուգումների քանակը՝ N_2	81	87	-6
Ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված և նույն ժամանակահատվածում իրականացված ստուգումների քանակ՝ N_1	19	15	4
Բարձր ռիսկային տնտեսավարող սուբյեկտներում իրականացված ստուգումների և ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված և նույն ժամանակահատվածում իրականացված ստուգումների քանակային հարաբերությունը՝ R	4.26	5.8	-1.54

Աղյուսակ 5.1-ում ներկայացնում ենք նաև ստուգումների ընդհանուր քանակի և բարձր ռիսկային տնտեսավարող սուբյեկտներում իրականացված ստուգումների քանակի տոկոսային հարաբերակցությունը:

Աղյուսակ 5.1

Ցուցանիշներ	2025թ. 2-րդ եռամսյակ	2024թ. 2-րդ եռամսյակ	Չամեմատ.
Բարձր ռիսկային տնտեսավարող սուբյեկտներում իրականացված ստուգումների քանակը	81	87	-6
Ստուգումների ընդհանուր քանակ	106	101	5
Բարձր ռիսկային տնտեսավարող սուբյեկտներում իրականացված ստուգումների քանակի և իրականացված ստուգումների ընդհանուր քանակի տոկոսային հարաբերությունը (%)	76.42	86.14	-9.72

2.3) Ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված ստուգումների միջին տևողությունը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$A = T/N$$

որտեղ՝



A-ն ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված ստուգումների միջին տևողությունն է.

T-ն ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված և իրականացված ստուգումների ընդհանուր տևողությունն է.

N-ը ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված և իրականացված ստուգումների քանակն է:

Արդյունքները ներկայացված են Աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6

Ցուցանիշներ	2025թ. 2-րդ եռամսյակ	2024թ. 2-րդ եռամսյակ	Համեմատ.
Ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված և իրականացված ստուգումների ընդհանուր տևողություն՝ T (օր)	572	585	-13
Ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված և իրականացված ստուգումների քանակ՝ N (հատ)	50	46	4
Ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված ստուգումների միջին տևողություն՝ A (օր)	11.44	12.72	-1.28

2.4) Ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընդհանուր քանակի (որոնց շնորհիվ կանխվել է հանրությանը, շրջակա միջավայրին, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց գույքային շահերին, պետությանը սպառնացող էական վնաս կամ ռիսկ) հարաբերակցությունը[1] ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընդհանուր քանակին.

Հաշվարկը կատարվում է հետևյալ բանաձևով՝

$$R = N_2/N_1$$

որտեղ՝

R-ը հաշվարկվող ցուցանիշն է.

N₂-ը ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընդհանուր քանակն է, (որոնց շնորհիվ կանխվել է հանրությանը, շրջակա միջավայրին, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց գույքային շահերին, պետությանը սպառնացող էական վնաս կամ ռիսկ).

N₁-ը ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընդհանուր քանակն է:

[1]- Էական վնաս են համարվել այն դեպքերը, երբ ստուգման ընթացքում խախտումներ արձանագրելու համար հիմք հանդիսացած հարցերի պատասխաններից ստացված կշիռների գումարի արժեքը կազմել է ստուգման ենթակա հարցերի կշիռների գումարի 70 և ավելի տոկոսը:

Արդյունքները ներկայացվում է Աղյուսակ 7-ում:

Աղյուսակ 7

Ցուցանիշներ	2025թ. 2-րդ եռամսյակ	2024թ. 2-րդ եռամսյակ	Համեմատ.
Ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների քանակ (N ₁), այդ թվում՝	56	55	1



- կանխվել է հանրությանը, շրջակա միջավայրին, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց գույքային շահերին, պետությանը սպառնացող էական վնաս կամ ռիսկ (N_2)	3	1	2
R ցուցանիշ	0.05	0.02	0.03

7-րդ աղյուսակի առաջին տողում ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների քանակի մեջ ներառված են առանձնահատուկ ստուգումների քանակը (N_1), իսկ երկրորդ տողում՝ ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընդհանուր քանակն է, (որոնց շնորհիվ կանխվել է հանրությանը, շրջակա միջավայրին, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց գույքային շահերին, պետությանը սպառնացող էական վնաս կամ ռիսկ (N_2)), քանի որ Տեսչական մարմնի կողմից առանձնահատուկ ստուգումներն իրականացվել են առանց համապատասխան ոլորտի և գործունեության տեսակի համար նախատեսված ստուգաթերթերի, որպիսի հանգամանքներում հայտնաբերված խախտումների դեպքում հնարավոր չէ հաշվարկել կշիռը և ռիսկը, հետևաբար առանձնահատուկ ստուգումները N_2 ցուցանիշի մեջ ներառված չեն, որովհետև պարզ չի նշված ստուգումների շնորհիվ կանխվել է՞ արդյոք հանրությանը, շրջակա միջավայրին, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց գույքային շահերին, պետությանը սպառնացող էական վնասը կամ ռիսկը:

2.5) Ստուգման ենթարկված օբյեկտների բավարարվածության աստիճանը Տեսչական մարմնի աշխատանքների անաչառությունից, ընթացակարգերի թափանցիկությունից, տեղեկատվության որակից և Տեսչական մարմնի ծառայողների արհեստավարժությունից.

Չափորոշիչի գնահատումը կատարվում է ելնելով Տեսչական մարմնի աշխատանքների անաչառության, ընթացակարգերի թափանցիկության, տեղեկատվության որակի և Տեսչական մարմնի ծառայողների արհեստավարժության վերաբերյալ ստացված դիմում-բողոքների քանակից:

Եթե առկա է բողոք (դատական կամ վարչական), ապա նշանակում է, որ տնտեսավարողը բավարարված չէ Տեսչական մարմնի աշխատանքների անաչառությունից, և/կամ տեղեկատվության որակից, և/կամ ընթացակարգերի թափանցիկությունից, և/կամ Տեսչական մարմնի ծառայողների արհեստավարժությունից:

2025 թվականի 2-րդ եռամսյակում ստացվել է 35 հատ դիմում բողոք:

2024 թվականի 2-րդ եռամսյակում ստացվել է 37 հատ դիմում բողոք:

Բողոքների վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է Աղյուսակ 10-ում:

3. ԱՐԴՅՈՒՆՔԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

Արդյունքի չափորոշիչները վերաբերում են Տեսչական մարմնի կոնկրետ լիազորության իրականացման անմիջական արդյունքին.

3.1) Ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված և ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների քանակական հարաբերակցությունը

Գնահատումը կատարվում է հետևյալ բանաձևով՝



$$R = N_2/N_1$$

որտեղ՝

R -ը հաշվարկվող ցուցանիշն է.

N_2 -ը ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընդհանուր քանակն է.

N_1 -ը ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված և իրականացված ստուգումների ընդհանուր քանակն է:

Արդյունքները ներկայացվում է Աղյուսակ 8-ում:

Աղյուսակ 8

Ցուցանիշներ	2025թ. 2-րդ եռամսյակ	2024թ. 2-րդ եռամսյակ	Համեմատ.
Ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընդհանուր քանակ՝ N_2	56	55	1
Ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված և իրականացված ստուգումների ընդհանուր քանակ՝ N_1	50	46	4
Ըստ անհրաժեշտության իրականացված և ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված ստուգումների քանակական հարաբերակցություն՝ R	1.12	1.20	-0.08

3.2) Տեսչական մարմնի վերահսկման երեքից հինգ բարձր ռիսկային բնագավառներում իրավիճակի փոփոխությունը.

Չափորոշչի գնահատումը կատարվում է տարեկան մեկ անգամ:

3.3) Ըստ առանձին ստուգման հատկացված ֆինանսական միջոցները և մարդկային ռեսուրսները.

Հաշվարկները կատարվել են հասանելի տեղեկատվության հիման վրա: Ֆինանսական միջոցների միջին ցուցանիշը ստանալու համար հիմք է ընդունվել ստուգումների համար հատկացված գործուղման ծախսերի և ստուգումների քանակի քանորոշը:

Արդյունքները ներկայացվում են Աղյուսակ 9-ում:

Աղյուսակ 9

Ցուցանիշներ	2025թ. 2-րդ եռամսյակ	2024թ. 2-րդ եռամսյակ	Համեմատ.
Մեկ ստուգման համար ծախսված ֆինանսական միջոցների միջին ցուցանիշ (գործուղումներ)	65 734	71 382	-5 648
Մեկ ստուգմանը մասնակցած մարդկային ռեսուրսների միջին ցուցանիշ	3.08	2.98	0.1
Ստուգումների քանակ	<u>106</u>	<u>101</u>	<u>5</u>

2025 թվականի 2-րդ եռամսյակում վառելիքի ծախսը կազմել է 14 450 լիտր բենզին, որից գործուղման համար ծախսվել է 12 180 լիտր բենզին: Գործուղման համար հատկացված ֆինանսական միջոցները՝ 19 276 700 դրամ (ըստ ՀՀ վարչապետի աշխատակազմի



Ֆինանսական և հաշվապահական հաշվառման վարչության կողմից ստացված տեղեկատվության):

3.4) Տեսչական մարմնի, Տեսչական մարմնի աշխատակիցների դեմ բերված դիմում-բողոքների քանակը և դրանց արդյունքները

Չափորոշիչը գնահատվում է վերլուծելով հաշվետու ժամանակահատվածում Տեսչական մարմնի, նրա աշխատակիցների գործողությունների կամ անգործության կամ նրա կողմից ընդունված վարչական ակտերի դեմ բերված բողոքների քանակը և դրանց վերաբերյալ ընդունված որոշումները:

Չափորոշիչը գնահատվում է ստացված բողոքների քանակի և իրականացված ստուգումների ընդհանուր քանակի համեմատությամբ:

Վերը նշված չափորոշիչի գնահատման համար ելակետային տվյալները ներկայացվում է Աղյուսակ 10-ում:

Աղյուսակ 10

N	Ցուցանիշներ	2025թ. 2-րդ եռամսյա կ	2024թ. 2-րդ եռամսյա կ	Համեմատ .
1	Տեսչական մարմնի դեմ բերված բողոքների քանակ, այդ թվում՝	35	37	-2
1.1	- դատական կարգով	20	29	-9
1.2	- վերադատության կարգով	15	8	7
2	Դատական կարգով բողոքների արդյունքում ուժի մեջ մտած գործն ըստ էության լուծող որոշումների քանակ, այդ թվում՝	13	9	4
2.1	- բավարարված (այդ թվում՝ մասնակի)	7	5	2
2.2	- մերժված	7	3	4
2.3	- այլ (կարճված, հաշտության համաձայնություն և այլն)	-	1	-1
3	Դատական կարգով բողոքների արդյունքում ուժի մեջ մտած գործն ըստ էության լուծող բավարարված (այդ թվում՝ մասնակի) որոշումների քանակը, որոնք նախկինում վերադատության կարգով բողոքարկվել և մերժվել են կամ թողնվել են առանց քննության	1	2	-1
4	Վերադատության կարգով բողոքների արդյունքում ընդունված որոշումների քանակ, այդ թվում՝	15	9	6
4.1	-բավարարված (այդ թվում՝ մասնակի)	2	-	2
4.2	- մերժված	10	5	5
4.3	- առանց քննության թողնված	3	4	-1



5	Ստուգումների քանակ	<u>106</u>	<u>101</u>	<u>5</u>
---	--------------------	------------	------------	----------

Տեսչական մարմնի կատարողականի գնահատման արդյունքում հայտնաբերված թերությունների վերացման ուղղությամբ Որակի ապահովման վարչությունը առաջարկությունները ներկայացնում է ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի Որակի ապահովման վարչության եռամսյակային հաշվետվություններում:

Կատարող՝
 Որակի ապահովման վարչություն
 Հեռ.՝ 015 488 880

